ԱՎՍՏՐՈՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Ցեղասպանության փաստը միջազգային հանրության դատաստանին ներկայացնելու համար հարկավոր են հավաստի փաստաթղթեր, որոնք կարող են լույս սփռել այս ոճրագործության լուսաբանման գործընթացի վրա: Տվյալ պարագայում Թուրքիայի և միջազգային հանրության կողմից ընդունելի փաստաթղթեր կարող են հանդիսանալ Թուրքիայի և Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության դաշնակից երկրների արխիվներում գտնվող նյութերը: Այս հանգամանքն ի նկատի ունենալով, հասկանալի է, որ մեծ է ավստրիական վավերագրերի արժեքը և, որ Ավստրո-Հունգարական նյութերն անշուշտ անկեղծ են:

Թուրքական արգումենտացիան կայանում է հետևյալում. «միանշանակ գրավոր հրաման չկա Օսմանյան կառավարության կողմից հայերի բնաջնջման մասին, հետևաբար չկա նաև ցեղասպանություն»:[1] Իսկ ավստրո-հունգարական փաստաթղթերը հնարավորություն են ստեղծում ապացուցել իրական պատմությունը:

Վավերագրերը վկայում են, որ հայերի հալածանքներն արդեն 1915թ-ի հունվարից սկսվել էին. 1915թ. յունվարի 26-ի մի զեկուցագրում նշված է. «Հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի նրանք սպանվեն: Քրդերը նույնպես սկսել են հայկական գյուղերի բնակիչներին կոտորել, բայց ստույգ նշված առանձին գործողություններով, որպեսզի թույլ չտան կասկած հարուցելու, որ հայերի նկատմամբ ամենուրեք կոտորած է իրականացվում»:[2]

Ապրիլի 12-ին (25) Պոլսի հայ բնակչությունը անհավատալի անակնկալի մեջ ընկավ: Առավոտից ոտքի էին ողջ ոստիկանությունը. բոլոր այն հայերը, ովքեր ճանաչում ունեին հանրային կյանքում ձերբակալվում և տեղափոխվում են ոստիկանատներ: Այս ձերբակալությունները չէին ընդհատվում: Այնպես որ շուրջ 600 հայ մտավորականներ բանտարկվեցին: Եվ միայն նրանցից քչերին է հաջողվում մասնավոր միջամտությամբ ազատվել:

Հայ բանտարկյալների համար որպես աքսորավայր ցույց էր տրվել 3 վայր Էնկյորիի մոտ, որոնք բնակեցված էին միայն մահմեդականներով: Նրանք, ովքեր զբաղվել էին քաղաքականությամբ, ուղարկվեցին Էնկյուրիի մոտ գտնվող Այաշ գյուղը, իսկ մնացած մտավորականները՝ Չանղրի և Չորում:[3]

1915թ. մայիսի 27-ի թուրքական նախարարների խորհրդի որոշմամբ թույլատրվում է հայկական զորամասերի հրամանատարներին հասարակական կարգի պահպանման նպատակով հուզումները վերացնել զենքի ուժով, և գնդակահարել շպիոնաժում կասկածվողներին:[4] Այս որոշումն անուղղակիորեն ուղղված էր հենց հայ ազգի դեմ և այն ընդունված էր պետական մակարդակով: Այն որ այս որոշումն ուղղված էր հայ ազգի դեմ, հաստատվում է Գերմանիայի դեսպան Վանգենհայմի մայիսի 31-ի նամակով, որն ուղարկել էր Գերմանիայի արտգործնախարարություն. «Էնվերը մտադրված է հայկական շպիոնաժը և մասայական շարժումները կանխելու նպատակով փակել հայկական դպրոցները, մեծ քանակությամբ հայկական թերթերը, և միջոցներ տեղափոխել բոլոր անվստահելի հայկական ընտանիքները»:[5] Հետաքրքիր է, որ Վանգենհեյմը շատ հանգիստ է ընդունում այս փաստը և կարծիք արտահայտում, որ այդ միջոցառումները «պետք է մեղմացնել բայց ոչ ընդհատել»:[6] 1915թ. հունիսին Թալեաթը հրաման է տալիս քաղաքացիական իշխանության մարմիններին սկսելու հայերի «տեղահանումները»:[7]

Թուրքական կառավարության հրահանգներն ի կատար էին ածվում ենթակա իշխանավորների կողմից առանց վստանման: 1915թ. հունիսի 10-ի ավստրո-հունգարական մի տեղեկագրում կարդում ենք, որ Պոլսում անհայտացել են առանձին հայ նշանավոր անձնավորությունները գիշերվա ընթացքում և տարվել են Ադանա ու այլ վայրեր: Բացի այդ թուրքական բանակում մեծ զտումներ են ձեռնարկվում, և այդ ընթացքում հայերին ու հույներին զինաթափում են և միայն ճանապարհային աշխատանքների, խրամատներ փորելու և նման գործեր կատարելու համար են օգտագործվում: Իսկ քրիստոնյա զինվորների հրացանները և զինամթերքը բաժանվել է մահմեդականներին:[8]

Թուրքիայում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին հուլիսի 1-ին հայտնեց Թալեաթին, որ առանց խտրության բոլոր տղամարդկանց ու երեխաների տեղահանությունները «թվում են դժվար արդարացուցիչ» և որ հարձակման ողջ ծրագիրը շատ վատ տպավորություն է ստեղծել:[9] Նույն օրը Պալավիչինին տեղեկացնում է, որ առիթ է ունեցել զրուցելու Մեծ վեզիրի հետ. «Այս դեպքում ես շեշտեցի, որ նույնիսկ որոշ հայեր պետության հանդեպ թշնամական նկրտումներում մեղավոր կամ ծայր աստիճան կասկածելի կարող էին լինել, այդ բոլոր դեպքերում չպիտի վերաբերվեր բոլորին, որոնք բնակվում են այս շրջանում, այնպես որ վերջիններիս առանց խտրության՝ նաև կանանց և երեխաների բռնագաղթի միջոցառումները դեպի Մոսուլի շրջան, արտակարգ կարճ ժամկետի ընթացքում, հազիվ թե արդարացի թվա: Ճանր կացությունը, այն եղանակը և ձևը, թե ինչպես է այդ միջոցառումն իրականացվելու, այդ

ամենը գրեթե հավասար է մահվան դատավճռի նրանց դեմ, ում վերաբերվում է այդ միջոցառումը: Այս հանգամանքին իրավասու մարմինները չէին կարող անիրազեկ լինել. դեռ ավելին, վերոհիշյալը ներկայացվում է հասարակայնությանը ուրույն, Թուրքիայի համար իրոք անհարկի լույսի ներքո, մի պարագա, որը միայն կարող է ջուր լցնել թշնամու ջրաղացին»: Այնուհետև Պալավիչինին ավելացնում է, որ Սայիդ Հալիմ Փաշան համոզված է, որ հայերին չեն կարող ձեռնարկված միջոցառումներից հետ պահել, և «ի վերջո ինձ հասկանալ տվեց, որ մարդիկ բոլոր դեպքերում ոչ այնքան հեռու, ինչպես մտադրված էին, բայց գաղթեցված կլինեն»:[10] Այս զրույցից մի քանի օր անց Ավստրո-Հունգարիայի դեսպանը այդ մասին գրում է, որ մեծ Վեզիրն իրեն հասկացրել է, որ արտաքսման և բռնագաղթեցման ժամանակ անհարկի դաժանություններից կխուսափեն: Բայց, ինչպես նշում է Պալավիչինին, դա այդպես չէ, ու «հատկապես հայերի նկատմամբ ուղղակի դաժանորեն են վերաբերվում, այն ժամանակ նրանք ուղղակի պատժիչ գործողությունների են ենթարկվում, որպեսզի նրանցից խոստովանության կորզվի գաղտնի կապերի, ռումբերի, թաքստատեղերի և այնի մասին»: Պալավիչինին շարունակում է՝ ասելով, որ Մորգենթաուն իրեն նոր սահմռկեցուցիչ իրողությունների է իրազեկ դարձրել: Դեսպանը եզրակացնում է. «Թուրքական կողմն չի կարող հայերի դեմ գործած դաժանություններեր երևան ժամանակով թաքցնել. և դրանք հայտնի կդառնան հատկապես ի վնաս թուրքական գործին նաև արտասահմանում: Իրոք, բուլղարական և ռումինական մամուլն արդեն թեման բարձրացրել է և հայանպաստ ոգով է գործում: Ցավոք, այստեղի հիշանավորներեր հայերի նկատմամբ հրեից գործելակերպի անարդարացի լինելու մեջ չեն համոզվում (ընդգծումը մերն է), և վտանգը մոտ է, որ նրանց համառ պատկերացումներն այս իրողության մասին սոսկ վնասելու են գործին: Այստեղ ակնհայտորեն հանդգնում են հասնել այն իրողությանը, որ կասկածելի դարձած հայկական տարրը մեկընդմիշտ բոլոր դեպքերում վնասազերծել»:[11] Չնայած այս անհանգստություններին, հայերի կոտորածները շարունակվում են: Թուրքիայի տարբեր կենտրոններից շարունակ լուրեր են հասնում աքսորումների մասին:

1915թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում ևս շարունակվում են հայերի նկատմամբ կիրառվող բռնությունները: Հոկտեմբերի 8-ին Պոլսում ավստրո-հունգարական զինվորական կցորդն իր զեկուցագրերից մեկում գրում է, որ հստակ օրենքով բանակների, կորպուսների և ինքնուրույն դիվիզիոների հրամանատարները իրենց ռազմական գործողությունների տարածքից անբարեհույս բնակչությանը հարկադրաբար վերաբնակեցնելու լիազորություն են ստացել: Նա ընդգծում է այն հանգամանքը, որ այդ միջոցառումը արտակարգ

խստությամբ գործադրվել է հատկապես հայերի նկատմամբ, և «թվում է, թե ոնոհանոապես այս օրենքը միայն նրա համար է ստեղծվել, որպեսզի հայերի ամբողջապես ընաջնջումը օրենքի հովանու ներքո կարողանան հրազործել» (Ընդգծումը մերն է):[12]

1915թ. օգոստոսի 13-ին Պալավիչինին հետևյալ դատողությունն է անում. «Ժամանակը կգա, երբ Թուրքիային անհրաժեշտ կլինի պատասխան տալ ոչնչացման իր քաղաքականության համար»:[13] Ինչպես տեսնում ենք, ավստրո-հունգարական փաստաթղթերն էլ, որպես անմիջական ականատեսներ, իրենց վկայությունն են տալիս Հայոց Ցեղասպանության հարցում, և մեկ անգամ ևս ապացուցում, որ ցեղասպանության հանցագործը պետք է դատապարտվի և կրի պատասխանատվության իր բաժինը:

---

[1] Германские источники о геноциде армян. Период первой мировой войны. (Сборник документов и материалов, под. ред. С.С. Степанян), т-1, Ереван, 1991, с. 96.

[2] Ohandjanian Artem, Die armenische Frage und die rolle Osterreich-Ungarns und Deutchlands, Erevan, 2001, s.37.

[3] Լեփսիուս Յ., Հայաստանի ջարդերը,/գաղտնի տեղեկագիր դրկ. Յոհաննես Լեփսիուսի/, Պեյրութ, 1965, էջ 233:

[4] Германские источники о геноциде армян. Период первой мировой войны. (Сборник документов и материалов, под. ред. С.С. Степанян), т-1, Ереван, 1991, с. 99.

[5] Армянский вопрос и геноцид армян в Турции/1913-1919гг./, /Материалы политархива МИД Кайзеровской Германии/, составитель, ответственный редактор В. Микаелян, Ереван, 1995, с. 174.

[6] Армянский вопрос и геноцид армян в Турции/1913-1919гг./, /Материалы политархива МИД Кайзеровской Германии/, составитель, ответственный редактор В. Микаелян, Ереван, 1995, с. 175.

[7] Фирбюхер Г., Армения 1915. Уничтожение культурного народа. Ереван, 1991, с. 48.

[8] Ohandjanian Artem, Osterreich-Armenien 1872-1936, Sammlung diplomatischer Aktenstucke, Wien, 1995, Bd, VI, S. 4586.

[9] Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 49:

[10] Ohandjanian Artem, Osterreich-Armenien 1872-1936, Sammlung diplomatischer Aktenstucke, Wien, 1995, Bd,VI, S. 4615-4617.

[11] Ohandjanian Artem, Osterreich-Armenien 1872-1936, Sammlung diplomatischer Aktenstucke, Wien, 1995, Bd, VI, S. 4620-4622.

[12] Ohandjanian Artem, Osterreich-Armenien 1872-1936 Sammlung diplomatischer Aktenstucke, Wien, 1995, Bd, VI, S. 4765-4766.

[13] Ohandjanian Artem, Osterreich-Armenien 1872-1936, Sammlung diplomatischer Aktenstucke, Wien, 1995, Bd, VI, S.4666.